

10408



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
Պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



[Handwritten signature]
« 30 » 09 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 198 - 24

Նախաձեռնող՝

«ԷՅՋ ԶԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ
Քաղաք Երևան, Այգեստան 9, շ. 69

Գործունեությունը՝

«Կապանի անտառապահության» մասնաճյուղի 2024-2033 թթ.
կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության
ռազմավարական էկոլոգիական գնահատում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 198 - 24

« 30 » սեպտեմբեր 2024թ.

«Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ԷՅՋ ԶԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Հիմնադրույթային փաստաթուղթ
- ազդեցության գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն,
անտառկառավարման պլան,
գծագրական նյութեր
Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Կապան և Քաջարան համայնքներ

Ներածական մաս. Սյունիքի մարզի Կապանի անտառտնտեսության մասնաճյուղի անտառկառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել շրջակա միջավայրի նախարարության՝ Անտառային կոմիտեի և «ԷՅՋ ԶԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ միջև կնքված 19.05.2023թ. ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-23/01-1 պայմանագիրը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի պատրաստման վերաբերյալ:

«Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանով նախատեսվում է 53422 հա ընդհանուր տարածքով՝ «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի, կազմում ընդգրկված ութ անտառտնտեսությունների համար նախատեսել կայուն անտառտնտեսության վարում և կառավարում՝ առաջիկա 10 տարիների համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 21-րդ հոդվածի՝ Կապանի անտառտնտեսության անտառկառավարման պլանը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում՝ Սյունիքի մարզի Կապան և Քաջարան խոշորացված համայնքների վարչական սահմաններում: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 47 կմ է, արևելքից արևմուտք՝ 48 կմ:

Անտառտնտեսությունը հյուսիսում շուրջ 16 կմ սահմանակցում է Սյունիքի անտառտնտեսությանը, արևմուտքում՝ շուրջ 80 կմ երկարությամբ (առանց հաշվի առնելու սահմանների մանր կտրտվածությունը) Քաջարան խոշորացված համայնքի համայնքային հողերին, հարավից՝ ավելի քան 40 կմ Կապան խոշորացված համայնքի համայնքային



հողերին և արևելքում մոտ 85 կմ գրեթե անընդհատ սահմանակցում է Ադրբեջանի հանրապետությանը: Անտառտնտեսությունն արևելքում և հարավում սահմանանակից է նաև «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրին («Ջանգեզուր» արգելավայր, «Շիկահող» արգելոց)՝ ընդհանուր շուրջ 60 կմ:

Կապանի անտառտնտեսությունը կազմավորվել է 1947թ. Գորիսի, Արծվանիկի, Կապանի, Բարտազի և Մեղրիի անտառապետությունների բազայի վրա:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 27.07.2021թ. թիվ 01-09/193 գրության համաձայն՝ անտառների և անտառային հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, Կապանի անտառտնտեսության կառուցվածքում կատարվել է փոփոխություն. Սյունիքի (Գորիսի) անտառտնտեսության կազմից Արծվանիկի անտառապետությունը հանվել է ընդգրկվել է Կապանի անտառտնտեսության կազմում:

Համաձայն ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության՝ անտառտնտեսության կազմում ընդգրկված են 6 անտառապետություններ, ամենափոքրն Արծվանիկի անտառապետությունն է՝ 5372 հա կամ ընդհանուր մակերեսի 10.1%-ը, մեծը՝ Դավիթ Բեկի անտառապետությունը՝ 14113.0 հա (26,5%), իսկ անտառապետությունների միջին մակերեսը՝ 8903.7 հա: Նախորդ՝ 2007 թ. անտառաշինությամբ հաշվառված ընդհանուր մակերեսն ավելացել է 14963 հա-ով, որը բացատրվում է Արծվանիկի անտառապետության միացման, շրջակա բնակավայրերի կադաստրային քարտեզագրման անտառային հողերի տարածքների և GIS համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով:

Ներկա անտառաշինությամբ անտառտնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 53422 հա:

Անտառտնտեսության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Կապան և Քաջարան խոշորացված համայնքների վարչական սահմաններում: Անտառտնտեսության ներքին սահմանները զգալի փոփոխությունների են ենթարկվել՝ նախկին անտառաշինության համեմատությամբ: Նախկին կոլխոզ-սովխոզային անտառներն առանձին քառակուսիներով ներկայացնելու փոխարեն այժմ ներտնտեսական սահմանները որոշվել են ռելիեֆի առանձնահատկություններով, հաշվի առնելով նաև առկա ճանապարհային ցանցը, (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ: Ներտնտեսական բաժանումն իրականացվել է՝ օգտագործելով երկրակապակցման համակարգեր, արբանակային պատկերներ և տեղագրական քարտեզներ՝ հաշվի առնելով դաշտային ուսումնասիրությունները և տնտեսության հետ քննարկումները:

«Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառները գտնվում են Հայաստանի հանրապետության հարավային անտառաճման շրջանում և տեղաբաշխված են Փոքր Կովկաս լեռնահամակարգի Ջանգեզուրի լեռնաշղթայից արևելք ձգվող Բարգուշատի և Մեղրիի լեռնաշղթաներից ճյուղավորվող լեռնաբազուկների լանջերին՝ Ողջի, Գեղի և մասամբ Ծավ գետերի ջրահավաք ավազաններում:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը (60,8%), սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25° -ից բարձր թեքության լանջերը (63,4%): Մինչև 15° թեքությունների վրա գտնվում է ընդհանուր տարածքի ընդհամենը 8,6%-ը, իսկ 42,9%-ը՝ 35° և բարձր թեքությունների վրա (Քարտեզ 4;5): Ըստ ծագման՝ առանձնացվում են կազմաբանական հետևյալ շրջանները՝

- մինչև ԾՄ 1200 մ բարձրության ցածր ժայռոտ լեռների շրջան,
- խիստ մասնատված միջին լեռների ժայռոտ շրջան,
- մասնատված սարահարթերի շրջան՝ 1750 – 2250 ԾՄ բարձր,



Բավականին բազմազան և հարուստ է կենդանական աշխարհը, որին նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, աղբյուրների առատությունը և Արաքսի ավազանի մոտիկությունը:

Տարածքում գրանցված են երկկենցաղների 1, սողունների 4, թռչունների 84 և կաթնասունների 24 տեսակներ: Կենդանիներից տարածված են սիրիական արջը, վայրի խոզը, այծյամը, վայրի ոչխարը, քարայծր, գայլը, լուսանը, հովազը, աղվեսը, նապաստակը, սկյուռը, ոզնին, կզաքիսը: Հանդիպում է նաև անտառային կատու, թփուտային դաշտամուկ, պարսկական սկյուռ, խլուրդ: Նաև սողուններ, թռչուններ (աղավնի, միրհավ, բազե, ագռավ և այլն), միջատներ ու բզեզների բազմաթիվ տեսակներ:

Անտառտնտեսության տարածքը պատված է մանր գետակների ցանցով: Բոլոր գետերը և գետակներն ունեն լեռնային բնույթ, սնվում են անձրևների, ձնհալքի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ կոշտ հոսք: Գետերը ջրառատ չեն, սակայն գարնանը դառնում են սելավատար: Անտառտնտեսության տարածքում է հոսում համեմատաբար խոշոր Ողջի գետը և Վաչագան, Գեղի, Ծավ, և այլ մանր գետակներ:

Էկոլոգիական վիճակի կարգավորման և բարելավման նպատակով կարևորվում է բնափայտային անտառօգտագործման հիմնավորված նախագծումը և իրականացումը, ինչը կապահովի անտառների կայունությունը ու երկարաժամկետ կայուն օգտագործումը: Փայտանյութի իրացման տարեկան միջին ծավալը կազմում է 2607 խտ մ³, նույն թվում սոճին 26.9 խտ մ³, ընդհանուր հատման ծավալի 1.03 %-ը, իսկ մնացածը՝ կարծրատերևավորները: Անտառտնտեսությունում հետագա 10 տարիների ընթացքում փափկատերևավոր տեսակների հատում չի նախատեսվել: Փայտանյութի օգտագործման ինտենսիվությունը 1 հեկտար անտառածածկի հաշվով կազմում է սոճու մոտ 2.87 մ³/հա, կարծրատերևավորների մոտ՝ 0.99 մ³/հա:

Նախատեսվող սանիտարական հատումների ընդհանուր մակերեսը կազմում է 1196.2 հա: Վերականգնման նախատեսվող ընդհանուր մակերեսը կազմում է ընդհանուր 1543.9 հա, նույն թվում անտառմշակույթների հիմնմամբ՝ 33.2 հա, որից ասեղնատերևավորները՝ 8.5 հա, կարծրատերևավորները՝ 24.7 հա: Նոսրուտներում և ցածր լրիվության ծառուտներում նախատեսվում է իրականացնել բնական վերածին օժանդակման միջոցառումներ, ընդհանուր 10.7 հա, իսկ ցանկապատման և պահպանության համապատասխան միջոցառումներով մատղաշի պահպանմամբ՝ 1500 հա:

Անտառտնտեսությանը հարակից 54 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5 կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով Կապան և Քաջարան քաղաքներում բնակչության ընդհանուր թիվը մոտ 47257, իսկ 52 գյուղական բնակավայրերում՝ 16412: Ջեռուցման փայտի նվազագույն պահանջարկն ընդհանուր հաշվով գնահատվում է մոտ 54000 մ³:

Դաշտային գույքագրման ընթացքում հաշվարկվել է նաև անտառտնտեսության անտառներում առկա բնական թափուկ բնափայտի պաշարը, (շուրջ 35000 մ³) ընդ որում թափուկ բնափայտի քանակական և որակական գնահատման նկարագիրը հետևյալն է.

16800 մ³ (48%) - 5 և ավել տարիների վաղեմությամբ, բնակավայրերից ու ճանապարհներից մեծ հեռավորությունների վրա և հիմնականում դժվարամատչելի տեղանքներում, մեծ մասի բնափայտը գտնվում են քայքայման փուլում, անհնար է արտահանել, կամ էլ արտահանման համար կպահանջվի տեխնիկական և նյութական մեծ ներդրումներ:



18200 մ³ (52%) - տեխնիկական հատկությունները դեռևս պահպանած բնափայտն է, ցրված անտառտնտեսության ողջ տարածքում, 1 հեկտարում միջին 2-5 մ³, հիմնականում մանր և միջին տրամագծի բնափայտի տեսքով, որից և օգտվում է բնակչությունը:

Յուրաքանչյուր տարում անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 17000 մ³ (ընթացիկ աճի մոտ 30%-ը կամ անտառածածկի 1 հա հաշվով մոտ. 040 մ³), որից համայնքների մոտակա տարածքների բնափայտը գրեթե ամբողջությամբ իրացվում է բնակչության կողմից ջեռուցման նպատակներով:

ՌԷԳ փաստաթղթում վեր է հանվել անտառանյութի օգտագործման սոցիալական և տնտեսական ազդեցությունը (բնափայտ, արոտավայրեր, կենսաարտադրանք, տեղական բնակչության զբաղվածություն, չքավորության աստիճան և եկամուտների ստացման հնարավորություններ, բնապատմական հուշարձանների դերը), ինչպես նաև դրանց նշանակությունը՝ տեղական կարիքների բավարարման տեսանկյունից: Սահմանում է տարեկան հատումների թույլատրելի քանակները, անտառապատմանը, անտառվերականգնմանը, անտառապահպանմանն ուղղված միջոցառումները:

Կառավարման պլանով նախատեսվում է նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ, միջոցառումներ:

2024-2033թթ.-ի անտառկառավարման պլանով նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ բացատներում, պարապուդ տարածքներում և մահացած տնկարկներում՝ ընդհանուր 35.4 հա տարածքում, նոսրուտներում՝ 9.3 հա: Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 30000 գծմ ցանկապատում, որի արդյունքում նախատեսվում է վերականգնել 1500 հա:

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են նաև սերմերի ցանք կամ տունկ:

Հաշվետվությունում ներկայացված է 2024-2033թթ ընթացքում Կապանի անտառտնտեսության անտառապատման և անտառվերականգնման աշխատանքների ամբողջ ծավալները:

Հիմնադրությային փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և կառավարման պլանով սահմանվել է ՌԷԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Պատճառաբանական եզրահանգումներ. «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատման շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի մաքրամիջավայրի ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, փոխադրության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, անտառային կոմիտեն, Այունիքի մարզպետարանը, Կապան և Քաջարան համայնքները:



նախաբանի 5-րդ էջում ներկայացված են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ այն մասին, որ գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառտնտեսության հետ, մինչդեռ պարզվել է, որ Կապան և Քաջարան համայնքների հետ որևէ քարտեզ չի ճշտվել և չի համաձայնեցվել:

Հաշվի առնելով այն փաստը, որ կառավարման պլանով սահմանված տարածքների որոշ հատվածները համընկնում են «Խուստուփ», «Ձանգեզուր» պետական արգելավայրերի տարածքների հետ, ինչպես նաև Կապան և Քաջարան համայնքների, գործընթացի մասնակիցների կողմից ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լսման արդյունքները և Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ ակնհայտ է, որ «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հիմնադրությային փաստաթղթը կազմվել է էական խախտումներով և Օրենքի դրույթներից շեղումներով:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով փորձաքննական եզրակացության պատճառաբանական եզրահանգումները՝ «ԷՅՁ ԶԻ ԷՅՁ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հիմնադրությային փաստաթղթին տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Էրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան